**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան — 11.12.2019թ.
ժամը $9^{30}$

Մասնակցում էին՝
**Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը,
**գնահատողներ՝**
ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ գնդապետ Վ. Վահանյանը,
ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյանը,
**Գնումները համակարգող՝** ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**
(Ա.Սահակյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**
(Ա.Սահակյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար բժշկական գործիքների, պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1 | «Ար-Մեդիկա» ՍՊԸ |
| 2 | «Էսգեթ ֆարմա» ՍՊԸ |
| 3 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ |
| 4 | «ԼԵՅԿՈ» ՍՊԸ |
| 5 | «Լյոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ |
| 6 | «Մեգիէլ» ՍՊԸ |
| 7 | «Նարսա-մեդ» ՍՊԸ |
| 8 | «Վիժմեդ» ՍՊԸ |
| 9 | «Փրայմ Մեդ» ՍՊԸ |
| 10 | Արսեն Գևորգյան Արշավիրի Ա/Ձ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**
(Ա. Սահակյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքերի.

ա) **«Լեյկո»** ՍՊԸ-ի, որի ներկայացված գնային առաջարկը (ընթացակարգի 18-րդ, 25-րդ, 26-րդ և 79-րդ չափաբաժինների մասով) սխալ էր լրացված, մասնավորապես ընթացակարգի հրավերի Հավելված N2-ով պահանջվող «ինքնարժեք» և «շահույթ» սյունակները ներկայացվել էին մեկ սյունակով՝ մեկ ընդհանուր թվով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետի պահանջները՝ **12.12.2019թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց «Լեյկո» ՍՊԸ-ի գնային առաջարկը (ընթացակարգի 18-րդ, 25-րդ, 26-րդ և 79-րդ չափաբաժինների մասով) գնահատել անբավարար (անհամապատասխան) սույն ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժեց նրա հայտը տվյալ չափաբաժինների մասով:

բ) **«Ար-Մեդիկա»** ՍՊԸ տնօրենի կողմից տրված լիազորագրում սխալ է նշված գնման ընթացակարգի գնման ձևը՝ սույն ընթացակարգը իրականացվում է հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով, սակայն ներկայացված լիազորագրում որպես գնման ձև նշված է՝ գնանշման հարցում:

գ) **«Ինտերմեդ Գրուպ»** ՍՊԸ-ի կողմից՝ սույն ընթացակարգի 27-րդ, 28-րդ, 30-րդ, 32-րդ և 33-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված է՝ «Թել ստերիլ, վիրաբուժական, սինթետիկ, ներծծվող, մոնոֆիլամենտ, պատրաստված է գլիկոլիդի և ե-կապրոլակտոնի համապոլիմերից կամ ներծծման ժամկետն ապահովող այլ նյութերից», անհրաժեշտ է հստակեցնել, թե որ նյութից են պատրաստված վերոնշյալ չափաբաժիններով առաջարկվող թելերը, ինչպես նաև սույն ընթացակարգի 27-րդ, 28-րդ, 30-րդ, 32-րդ, 33-րդ, 35-րդ, 37-րդ, 39-րդ, 41-րդ, 43-րդ, 45-րդ, 47-րդ, 49-րդ, 50-րդ, 52-րդ, 54-րդ, 55-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ և 61-րդ չափաբաժիններով առաջարկվող վիրաբուժական թելերի տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ ծածկույթով են պատված նշված թելերը՝ հակաբակտերիալ, թե հակասեպտիկ՝ բացառելով կամ բառերը:

դ) **«Մեգինէլ»** ՍՊԸ-ի կողմից՝ սույն ընթացակարգի 29-րդ, 31-րդ, 34-րդ, 36-րդ, 38-րդ, 40-րդ, 42-րդ, 44-րդ, 46-րդ, 48-րդ, 51-րդ, 53-րդ, 56-րդ և 60-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերում (Հավելված N1.1) լրացված չեն «ապրանքային նշանը» և «արտադրողի անվանումը» դաշտերը, իսկ «ֆիրմային անվանումը» դաշտում լրացված են սույն ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքների անվանումները, բացի այդ 48-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «ասեղը ծակող 30մմ», մինչդեռ սույն ընթացակարգի հրավերով պահանջվում է՝ «ասեղը ծակող 40մմ»:

ե) **«Նարսա-մեդ»** ՍՊԸ-ի կողմից՝ սույն ընթացակարգի 85-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է՝ սույն ընթացակարգի հրավերի 85-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված «ցեմենտի ամրագրմամբ DUALIS»-ի և նրա պոլիէթիլենային կոմպոնենտի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև անհրաժեշտ է հստակեցնել «DUALIS կամ համարժեք» արտահայտությունը՝ բացառելով «կամ համարժեք» բառակապակցությունը, բացի այդ Հավելված N 1.1-ի «ֆիրմային անվանումը» դաշտում բացակայում է «հավաք» բառը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.2 կետի պահանջները՝ **12.12.2019թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց **«Լեյկո» ՍՊԸ**-ի գնային առաջարկը (ընթացակարգի 18-րդ, 25-րդ, 26-րդ և 79-րդ չափաբաժինների մասով) գնահատել անբավարար (անհամապատասխան) սույն ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժեց նրա հայտը տվյալ չափաբաժինների մասով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ **12.12.2019թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց վերոնշյալ մասնակիցներից **«Ար-Մեդիկա»** ՍՊԸ-ին, **«Ինտերմեդ Գրուպ»** ՍՊԸ-ին, **«Մեգինէլ»** ՍՊԸ-ին և **«Նարսա-մեդ»** ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

2.4 Գնահատող հանձնաժողովը հայտերը գնահատելիս արձանագրել է նաև հետևյալը.

ա) **«Մեգինէլ»** ՍՊԸ-ի կողմից՝ սույն ընթացակարգի 29-րդ, 31-րդ և 34-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված է, որ նշված չափաբաժիններով առաջարկվող վիրաբուժական թելերը պատրաստված են «գլիկոմեր 631» նյութից, որը, համաձայն սույն ընթացակարգի գնման հայտը նախագծող անձի կողմից 12.12.2019թ. N 19/2869 գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացության, ապահովում է սույն ընթացակարգի հրավերով տվյալ ապրանքների համար պահանջվող ներծծման ժամկետը և համարժեք է հրավերով սահմանված պահանջներին:

բ) **«Էսզեթ ֆարմա»** ՍՊԸ-ի կողմից՝ սույն ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է՝ «Երկարությունը՝ 25մմ, 30մմ, ոչ ճկուն», մինչդեռ սույն ընթացակարգի հրավերի 5-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրով պահանջվում է՝ «Երկարությունը՝ 25մմ, 31մմ, ոչ ճկուն»: Համաձայն սույն ընթացակարգի գնման հայտը նախագծող անձի կողմից 12.12.2019թ. N 19/2869 գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացության՝ նշված չափաբաժնով առաջարկվող ապրանքի 30մմ երկարությունը ընդունելի է, քանի որ 1մմ-ի տարբերությունը էական նշանակություն չունի տվյալ ապրանքի կիրառման ժամանակ և ապահովում է այն արդյունքը, որի համար նախատեսված է տվյալ ապրանքի ձեռքբերումը:

2.5 **16.12.2019թ.**-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, արձանագրելով, որ սույն արձանագրության **2.3** կետում նշված՝ շտկման ենթակա անհամապատասխանությունները մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են, ինչպես նաև հաշվի առնելով սույն ընթացակարգի գնման հայտը նախագծող անձի կողմից 12.12.2019թ. N 19/2869 գրությամբ ներկայացված մասնագիտական եզրակացությունը, որոշեց **«Ար-Մեդիկա»** ՍՊԸ-ի, **«Ինտերմեդ Գրուպ»** ՍՊԸ-ի, **«Մեգինէլ»** ՍՊԸ-ի, **«Նարսա-մեդ»** ՍՊԸ-ի և **«Էսզեթ ֆարմա»** ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար (համապատասխան) սույն ընթացակարգի հրավերի պահանջներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

(Ա.Սահակյան)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները, բացառությամբ «Լեյկո» ՍՊԸ-ի.

ՀՀ դրամ

| Չ/հ | Գնման առարկա | Չափման միավոր | Քանակ | Նախահաշվային գումար | Մասնակիցներ | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Գին |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տուրբինային գչիրներ | հատ | 1,000 | 1,020,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 867,000 | 153,000 | | 1,020,000 |
| 2 | Պլոմբը հարթեցնելու ռետին | հատ | 1,200 | 358,800 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 304,980 | 53,820 | | 358,800 |
| 3 | Ատամնաբուժական ասեղներ | հատ | 15,000 | 405,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 344,250 | 60,750 | | 405,000 |
| 4 | Ալգինատ | հատ | 30 | 87,120 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 61,710 | 10,890 | 14,520 | 87,120 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Ֆայլեր K-files, H-files | հատ | 5,000 | 3,150,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 2,550,000 | 450,000 | | 3,000,000 |
| 6 | Արմատալեցիչ | լրակազմ | 400 | 2,520,000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | | | |
| 7 | Գեյց-գլիդեն | լրակազմ | 300 | 2,670,000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | | | |
| 8 | Լարգո | լրակազմ | 300 | 2,670,000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | | | |
| 9 | Դամի ռեզին | հատ | 600 | 126,000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | | | |
| 10 | Արտիկուլացիոն թուղթ | հատ | 2,400 | 816,000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | | | |
| 11 | Ժամանակավոր պլոմբանյութ | հատ | 15 | 99,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 84,150 | 14,850 | | 99,000 |
| 12 | Բոնդ | հատ | 20 | 538,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 457,300 | 80,700 | | 538,000 |
| 13 | Պլոմբանյութ լուսակարծրացող | լրակազմ | 15 | 2,940,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 2,499,000 | 441,000 | | 2,940,000 |
| 14 | Քիմիական կարծրացման ցեմենտ | լրակազմ | 5 | 215,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 182,750 | 32,250 | | 215,000 |
| 15 | Հեղուկ պլոմբանյութ | հատ | 40 | 476,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 404,600 | 71,400 | | 476,000 |
| 16 | Մատրիցա | հատ | 900 | 66,600 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | | | |
| 17 | Արմատալիցք | լրակազմ | 30 | 594,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 504,900 | 89,100 | | 594,000 |
| 18 | Բամբակե գլանակներ | հատ | 15,000 | 112,500 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 66,940 | 11,810 | 15,750 | 94,500 |
| | | | | | «ԼԵՅԿՈ» ՍՊԸ | 150,000 | | | 150,000 |
| 19 | Պլոմբը փայլեցնող մածուկ | հատ | 1,000 | 150,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 106,250 | 18,750 | 25,000 | 150,000 |
| 20 | Թքածծիչ | հատ | 20,000 | 237,600 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 168,300 | 29,700 | 39,600 | 237,600 |
| 21 | Տուրբինային ծայրակալներ | հատ | 7 | 686,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 583,100 | 102,900 | | 686,000 |
| 22 | Ուղիղ և թեք անկյունային ծայրակալների հավաքածու միկրոմոտորով | լրակազմ | 8 | 1,824,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 1,550,400 | 273,600 | | 1,824,000 |
| 23 | Պլոմբանյութը չորացնող լամպ | հատ | 2 | 1,130,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 960,500 | 169,500 | | 1,130,000 |
| 24 | Ապեքսլոկատոր | լրակազմ | 5 | 2,875,000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | | | |
| 25 | Արյան փոխներարկման համակարգ /ինֆուզիոն/N1 | հատ | 100,000 | 4,500,000 | «ԼԵՅԿՈ» ՍՊԸ | 4,500,000 | | | 4,500,000 |
| 26 | Ներարկիչ մ/ն 5մլ ասեղով | հատ | 150,000 | 1,950,000 | «Լևոն և Լամարա» դեղատուն ՍՊԸ | 1,508,917.5 | 282,082.5 | | 1,791,000 |
| | | | | | «ԼԵՅԿՈ» ՍՊԸ | 1,950,000 | | | 1,950,000 |
| 27 | Մոնոֆիլամենտ սինթետիկ կարանյութ /ներծծման միջին ժամկետով 90-120 օր/ հակաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով, թելի հաստությունը՝ (5-0) | հատ | 144 | 406,080 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 324,870 | 81,210 | | 406,080 |
| 28 | Մոնոֆիլամենտ սինթետիկ կարանյութ /ներծծման միջին ժամկետով 90-120 օր/ հակաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով, թելի հաստությունը՝ (4-0) | հատ | 240 | 717,600 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 574,080 | 143,520 | | 717,600 |
| 29 | Մոնոֆիլամենտ սինթետիկ կարանյութ /ներծծման միջին ժամկետով 90-120 օր/, թելի հաստությունը՝ (4-0) | հատ | 240 | 360,000 | «Մեգիէլ» ՍՊԸ | 324,000 | 36,000 | | 360,000 |
| 30 | Մոնոֆիլամենտ սինթետիկ կարանյութ /ներծծման միջին ժամկետով 90-120 օր /հակաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով, թելի հաստությունը՝ (3-0) | հատ | 120 | 366,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 292,800 | 73,200 | | 366,000 |
| 31 | Մոնոֆիլամենտ սինթետիկ կարանյութ /ներծծման միջին ժամկետով 90-120 օր/, թելի հաստությունը՝ (3-0) | հատ | 120 | 204,000 | «Մեգիէլ» ՍՊԸ | 186,000 | 18,000 | | 204,000 |
| 32 | Մոնոֆիլամենտ սինթետիկ կարանյութ /ներծծման միջին ժամկետով 90-120 օր/ հակաբակտերիալ կամ հակասեպտիկ թելի հաստությունը՝ (2-0) | հատ | 360 | 1,346,400 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 1,077,120 | 269,280 | | 1,346,400 |
| 33 | Մոնոֆիլամենտ սինթետիկ կարանյութ /ներծծման միջին ժամկետով 90-120 օր/ հակաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով թելիհաստությունը՝ (0) | հատ | 360 | 1,076,400 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 861,120 | 215,280 | | 1,076,400 |
| 34 | Մոնոֆիլամենտ սինթետիկ կարանյութ /ներծծման միջին ժամկետով 90-120 օր/, թելի հաստությունը՝ (0) | հատ | 360 | 576,000 | «Մեգիէլ» ՍՊԸ | 540,000 | 36,000 | | 576,000 |
| 35 | Հյուսված ներծծվող սինթետիկ կարանյութ հակաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով թելի հաստությունը՝ 3-0 | հատ | 360 | 828,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 662,400 | 165,600 | | 828,000 |
| 36 | Հյուսված ներծծվող | հատ | 360 | 432,000 | «Մեգիէլ» ՍՊԸ | 396,000 | 36,000 | | 432,000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | սինթետիկ կարանյութ թելի հաստությունը՝ 3-0 | | | | | | | | |
| 37 | Հյուսված ներծծվող սինթետիկ կարանյութ հակաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով թելիհաստությունը՝ 4-0 | հատ | 360 | 910,800 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 728,640 | 182,160 | | 910,800 |
| 38 | Հյուսված ներծծվող սինթետիկ կարանյութ թելիհաստությունը՝ 4-0 | հատ | 360 | 522,000 | «Մեգիէլ» ՍՊԸ | 486,000 | 36,000 | | 522,000 |
| 39 | Մոնոֆիլամենտ սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման երկար տևողությամբ 180-210օր/, թելի հաստությունը՝ (4-0), հակաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով | հատ | 288 | 912,960 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 730,370 | 182,590 | | 912,960 |
| 40 | Մոնոֆիլամենտ սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման երկար տևողությամբ 180-210օր/, թելի հաստությունը՝ (4-0), | հատ | 288 | 417,600 | «Մեգիէլ» ՍՊԸ | 374,400 | 43,200 | | 417,600 |
| 41 | Մոնոֆիլամենտ սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման երկար տևողությամբ 180-210օր/ թելի հաստությունը՝ (4-0) հակաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով | հատ | 288 | 912,960 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 730,370 | 182,590 | | 912,960 |
| 42 | Մոնոֆիլամենտ սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման երկար տևողությամբ 180-210օր/, թելի հաստությունը՝ (4-0), | հատ | 288 | 460,800 | «Մեգիէլ» ՍՊԸ | 417,600 | 43,200 | | 460,800 |
| 43 | Մոնոֆիլամենտ սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման երկար տևողությամբ 180-210օր/ թելի հաստությունը՝ (3-0) հակաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով | հատ | 600 | 1,836,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 1,468,800 | 367,200 | | 1,836,000 |
| 44 | Մոնոֆիլամենտ սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման երկար տևողությամբ 180-210օր/, թելի հաստությունը՝ (3-0), | հատ | 600 | 900,000 | «Մեգիէլ» ՍՊԸ | 810,000 | 90,000 | | 900,000 |
| 45 | Մոնոֆիլամենտ սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման երկար տևողությամբ 180-210օր/ թելի հաստությունը՝ (2-0) հակաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով | հատ | 120 | 399,600 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 319,680 | 79,920 | | 399,600 |
| 46 | Մոնոֆիլամենտ սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման երկար տևողությամբ 180-210օր/, թելի հաստությունը՝ (2-0). | հատ | 120 | 192,000 | «Մեգիէլ» ՍՊԸ | 174,000 | 18,000 | | 192,000 |
| 47 | Մոնոֆիլամենտ սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման երկար տևողությամբ 180-210օր/ թելի հաստությունը՝ (1) հաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով | հատ | 144 | 561,600 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 449,280 | 112,320 | | 561,600 |
| 48 | Մոնոֆիլամենտ սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման երկար տևողությամբ 180-210օր/ թելի հաստությունը՝ (1) | հատ | 144 | 266,400 | «Մեգիէլ» ՍՊԸ | 237,600 | 28,800 | | 266,400 |
| 49 | Մոնոֆիլամենտ սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման երկար տևողությամբ 180-210օր/ թելի հաստությունը՝ (0) հաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով | հատ | 96 | 302,400 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 241,920 | 60,480 | | 302,400 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 50 | Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 56-70 օր/ թելի հաստությունը՝ (3-0) հաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով | հատ | 720 | 1,771,200 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 1,416,960 | 354,240 | | 1,771,200 |
| 51 | Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 56-70 օր/ թելի հաստությունը՝ (3-0) | հատ | 720 | 972,000 | «Մեգիէլ» ՍՊԸ | 900,000 | 72,000 | | 972,000 |
| 52 | Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 56-70 օր/ թելի հաստությունը՝ (3-0) հաբակտերիալ ծածկույթով | հատ | 600 | 1,314,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 1,051,200 | 262,800 | | 1,314,000 |
| 53 | Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 56-70 օր/ թելի հաստությունը՝ (3-0) | հատ | 600 | 720,000 | «Մեգիէլ» ՍՊԸ | 660,000 | 60,000 | | 720,000 |
| 54 | Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 56-70 օր/ թելի հաստությունը՝ (4-0) հաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով | հատ | 456 | 1,463,760 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 1,171,008 | 292,752 | | 1,463,760 |
| 55 | Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 56-70 օր/ թելի հաստությունը՝ (2-0) հաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով | հատ | 456 | 1,062,480 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 849,990 | 212,490 | | 1,062,480 |
| 56 | Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 56-70 օր/ թելի հաստությունը՝ (2-0) | հատ | 456 | 547,200 | «Մեգիէլ» ՍՊԸ | 501,600 | 45,600 | | 547,200 |
| 57 | Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 56-70 օր/ թելի հաստությունը՝ (2-0) հաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով | հատ | 192 | 432,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 345,600 | 86,400 | | 432,000 |
| 58 | Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 56-70 օր/ թելի հաստությունը՝ (2-0) հաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով | հատ | 288 | 668,160 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 534,530 | 133,630 | | 668,160 |
| 59 | Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 56 - 70 օր/ թելի հաստությունը՝ (1) հաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով | հատ | 288 | 760,320 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 608,260 | 152,060 | | 760,320 |
| 60 | Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 56-70 օր/ թելի հաստությունը՝ (1) | հատ | 288 | 403,200 | «Մեգիէլ» ՍՊԸ | 374,400 | 28,800 | | 403,200 |
| 61 | Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 56-70 օր/ թելի հաստությունը՝ (0) հաբակտերիալ կամ հակասեպտիկ ծածկույթով | հատ | 288 | 671,040 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 536,840 | 134,200 | | 671,040 |
| 62 | Հյուսված սինթետիկ ներծծվող վիրաբուժական կարանյութ /ներծծման միջին տևողությամբ 56-70 օր/ թելի հաստությունը՝ (0) | հատ | 288 | 360,000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | | | |
| 63 | Ադապտոր նախատեսված ուլտրաձայնային գործիքի համար | հատ | 9 | 1,845,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 1,568,250 | 276,750 | | 1,845,000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 64 | Ոտքի առբերից նախատեսված ԳԵՆ 11 էլեկտրադանակի համար | հատ | 9 | 8,460,000 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 7,191,000 | 1,269,000 | | 8,460,000 |
| 65 | Ոսպնյակ կոշտ | հատ | 25 | 425,000 | «Վիժնմեդ» ՍՊԸ | 369,750 | 55,250 | | 425,000 |
| 66 | Ոսպնյակ փափուկ | հատ | 100 | 4,300,000 | «Վիժնմեդ» ՍՊԸ | 3,741,000 | 559,000 | | 4,300,000 |
| 67 | Ոսպնյակ փափուկ պրեմիում | հատ | 25 | 1,500,000 | «Վիժնմեդ» ՍՊԸ | 1,305,000 | 195,000 | | 1,500,000 |
| 68 | Ինժեկտոր բազմանգամյա նախատեսված ներակնային ոսպնյակի իմպլանտացիայի համար | հատ | 1 | 270,000 | «Վիժնմեդ» ՍՊԸ | 234,900 | 35,100 | | 270,000 |
| 69 | Վիսկոէլաստիկ 2 մլ հեղուկ՝ ինժեկտորի մեջ | հատ | 150 | 1,050,000 | «Վիժնմեդ» ՍՊԸ | 913,500 | 136,500 | | 1,050,000 |
| 70 | Դանակ միկրովիրաբուժական 2.75 mm | հատ | 50 | 400,000 | «Վիժնմեդ» ՍՊԸ | 348,000 | 52,000 | | 400,000 |
| 71 | Դանակ միկրովիրաբուժական | հատ | 40 | 400,000 | «Վիժնմեդ» ՍՊԸ | 348,000 | 52,000 | | 400,000 |
| 72 | Ներկ 0.5 մլ՝ ոսպնյակի կապսուլան ներկելու համար | հատ | 20 | 180,000 | «Վիժնմեդ» ՍՊԸ | 156,600 | 23,400 | | 180,000 |
| 73 | Ոսկրերի մետաղական ֆիքսացիայի համար նախատեսված գործիքների և պարագաների հավաք | լրակազմ | 2 | 6,780,000 | «Փրայմ Մեդ» ՍՊԸ | 6,100,000 | 236,200 | | 6,336,200 |
| 74 | Ոսկրերի մետաղական ֆիքսացիայի համար նախատեսված գործիքների և պարագաների հավաք | լրակազմ | 2 | 5,200,000 | Արսեն Գևորգյան Արշավիրի Ա/Ձ | 3,423,200 | 855,800 | | 4,279,000 |
| 75 | Ոսկրերի մետաղական ֆիքսացիայի համար նախատեսված գործիքների և պարագաների հավաք | լրակազմ | 2 | 3,374,000 | «Փրայմ Մեդ» ՍՊԸ | 2,970,000 | 199,500 | | 3,169,500 |
| 76 | Ոսկրերի մետաղական ֆիքսացիայի համար նախատեսված գործիքների և պարագաների հավաք | լրակազմ | 2 | 4,300,000 | Արսեն Գևորգյան Արշավիրի Ա/Ձ | 3,092,000 | 773,000 | | 3,865,000 |
| 77 | Պտուտակի ակոսահան (Մետչիկ) /2.8մմ, 3մմ և 4մմ/ | հատ | 12 | 102,000 | «Փրայմ Մեդ» ՍՊԸ | 69,000 | 24,600 | | 93,600 |
| 78 | Մետաղական ֆիքսացիայի և կմախքային ձգման համար նախատեսված շյուղեր /1.5մմ, 2մմ և 3մմ/ | հատ | 3,000 | 1,950,000 | Արսեն Գևորգյան Արշավիրի Ա/Ձ | 1,440,000 | 360,000 | | 1,800,000 |
| 79 | Թանզիվ բժշկական | մետր | 200,000 | 16,800,000 | «ԼԵՅԿՈ» ՍՊԸ | 16,800,000 | | | 16,800,000 |
| 80 | GEN 11 էլեկտրադանակի ծայրադիր 35սմ բաց և լապորոսկոպիկ վիրահատությունների համար | հատ | 54 | 21,802,500 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 18,532,125 | 3,270,375 | | 21,802,500 |
| 81 | GEN 11 էլեկտրադանակի ծայրադիր 25սմ բաց և լապորոսկոպիկ վիրահատությունների համար | հատ | 54 | 21,802,500 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 18,532,125 | 3,270,375 | | 21,802,500 |
| 82 | GEN 11 էլեկտրադանակի ծայրադիր 14 սմ բաց և լապորոսկոպիկ վիրահատությունների համար | հատ | 54 | 19,127,826 | «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ | 16,258,650 | 2,869,176 | | 19,127,826 |
| 83 | ԼՕՌ գործիքների և պարագաների հավաք | լրակազմ | 3 | 18,000,000 | Ոչ մի հայտ չի ներկայացվել: | | | | |
| 84 | Կոնքազդրային հոդի ոչ ցեմենտային էնդոպրոթեզների հավաք | լրակազմ | 23 | 21,850,000 | «Ար-Մեդիկա» ՍՊԸ | 18,208,330 | 3,641,670 | | 21,850,000 |
| 85 | Կոնքազդրային հոդի ոչ ցեմենտային կրկնակի շարժունակությամբ էնդոպրոթեզի հավաք | լրակազմ | 23 | 22,770,000 | «Նարսա-մեդ» ՍՊԸ | 16,950,000 | 5,820,000 | | 22,770,000 |
| 86 | Դենտալ իմպլանտներ աբատմենթներով | հատ | 500 | 23,790,000 | «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ | 20,221,500 | 3,568,500 | | 23,790,000 |
| 87 | Երկկոմպոնենտ պարանոցային կցիչների և պտուտակների հավաք | լրակազմ | 1 | 14,000,000 | «Ար-Մեդիկա» ՍՊԸ | 11,666,660 | 2,333,340 | | 14,000,000 |

3.2 Մասնակիցների (բացառությամբ «Լեյկո» ՍՊԸ-ի) գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 **16.12.2019թ.-ին** կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի թիվ 1, 2, 3, 4, 5, 11, 12, 13, 14, 15, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 80, 81, 82, 84, 85, 86 և 87 չափաբաժինների մասով հրավերի պահանջներին համապատասխան գնահատված հայտ ներկայացրած մասնակիցները միակն են նշված յուրաքանչյուր չափաբաժինների մասով, որոնց տնօրենները կամ նրանց կողմից լիազորված անձինք ներկա են եղել նիստին և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N

526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությունը, որոշեց ընտրված մասնակիցներին որոշելու նպատակով առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարել միաժամանակյա բանակցություններ:

Բանակցությունների արդյունքում մասնակիցները հրաժարվեցին նվազեցնել առաջարկած գները և նրանց գնային առաջարկները մնացին անփոփոխ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Ա.Սահակյան)

4.1 **16.12.2019թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակիցներ հայտարարել՝

1) «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ին՝ թիվ 84 և 87 չափաբաժինների մասով,

2) «Էսզեթ ֆարմա» ՍՊԸ-ին՝ թիվ 1, 2, 3, 4, 5, 11, 12, 13, 14, 15, 17, 18, 19, 20, 21, 22, 23 և 86 չափաբաժինների մասով,

3) «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին՝ թիվ 27, 28, 30, 32, 33, 35, 37, 39, 41, 43, 45, 47, 49, 50, 52, 54, 55, 57, 58, 59, 61, 63, 64, 80, 81 և 82 չափաբաժինների մասով,

4) «Լոռի և Լամարա» դեղատուն ՍՊԸ-ին՝ թիվ 26 չափաբաժնի մասով:

5) «Մեգիէլ» ՍՊԸ-ին՝ թիվ 29, 31, 34, 36, 38, 40, 42, 44, 46, 48, 51, 53, 56 և 60 չափաբաժինների մասով:

6) «Նարսա-մեդ» ՍՊԸ-ին՝ թիվ 85 չափաբաժնի մասով,

7) «Վիժեմեր» ՍՊԸ-ին՝ թիվ 65, 66, 67, 68, 69, 70, 71 և 72 չափաբաժինների մասով:

8) «Փրայմ Մեդ» ՍՊԸ-ին՝ թիվ 73, 75 և 77 չափաբաժինների մասով:

9) Արսեն Գևորգյան Արշավիրի Ա/Ձ-ին՝ թիվ 74, 76 և 78 չափաբաժինների մասով:

4.2 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի թիվ 6, 7, 8, 9, 10, 16, 24, 62 և 83 չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները, որոշեց սույն ընթացակարգը նշված չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

4.3 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի թիվ 25 և 79 չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել միայն «Լեյկո» ՍՊԸ-ն, որի հայտը մերժվել է, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները, որոշեց սույն ընթացակարգը նշված չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

4.4 Քանի որ սույն ընթացակարգի թիվ 18 և 26 չափաբաժինների մասով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անհրաժեշտ է կիրառել անգործության հնգօրյա ժամկետ, իսկ պայմանագրերը (համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի) հնարավոր կլինի կնքել ոչ շուտ, քան այդ ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ուստի նշված չափաբաժինների մասով պայմանագրեր կարող են կնքվել ոչ շուտ, քան 24.12.2019թ.-ը, մինչդեռ սույն ընթացակարգի հրավերով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանված 23.12.2019թ.-ը:

ՀՀ կառավարության 15.06.2018թ. N 706-Ն որոշմամբ հաստատված «Բյուջեների կատարման» կարգի 84-րդ կետի համաձայն՝ տվյալ տարվա դեկտեմբերի 20-ից հետո հիմնարկներին, որոնց հիմնադիրը Հայաստանի Հանրապետության կառավարությունն է (ՀՀ պաշտպանության նախարարության հիմնադիրը ՀՀ կառավարությունն է՝ համաձայն «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի), չի թույլատրվում գործարքներով ստանձնել ֆինանսական նոր պարտավորություններ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ համաձայնեցված դեպքերի:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն ընթացակարգի թիվ 18 և 26 չափաբաժինների մասով մինչև 20.12.2019թ.-ը հնարավոր չի լինի պայմանագրեր կնքել՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով սույն ընթացակարգը թիվ 18 և 26 չափաբաժինների մասով հայտարարել չկայացած:

4.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.6 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.7 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցներին, բացառությամբ սույն ընթացակարգի թիվ 18 և 26 չափաբաժինների մասով, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:**

(Ա.Սահակյան)

5.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Ա.Սահակյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Ա. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՄԱԱՊՁԲ-9/8» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող (ՁԱՊ)** | Ա. Նազարյան |
| **Գնահատող** | Վ. Վահանյան |
| **Գնահատող** | Գ. Անտոնյան |
| **Գնահատող** | Հ. Ավետիսյան |
| **Գնումները համակարգող** | Ա. Սահակյան |